

Մ. փիլոսոֆ

Բնիկ Լեւոն

յեւ
խանի խաղող



891.995
ս. 66

ՅԵՐԿԻՐԱՅԻՆ ՀՐԱՑԱՐԸԿՉՈՒԹՅՈՒՆ—1935

891.39 Կ. 93
Կ-660

2011-07

Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

Բնիկ Լեւկոն

յեւ
խանկ խաղող

1008 3964
36062

20625

1934

ԱԶՈՎ-ՍԵՎԺՈՎՅԱՆ ՅԵՐԿԻՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ



1.

Ծովանն ու ճուտիկ
ու շալվարավոր
մեր բլկիկ լեկոն՝
գնացին այգի:


Հէյ-հէյ, այգում
ես ինչքան զով ե—
քամին խաղում ե
ծառ ու թփի հետ,
տերեւները կամաց
զրույց են անում:

Արևն ել թափուն
 ճյուղերի միջից
 դիտում ե, ժպտում,
 կարկաչուն առվի
 ջրի հետ խաղում:

Տեղ թիթեռները՝
 կարմիր ու կապույտ,
 ճերմակ, դույնագլույն
 թևերով՝ իրենց,
 շուրջպար են կապել
 ծաղիկների շուրջ:

2.

Ել վոնց համբերեն
 Ծովանն ու ճուտիկ, —
 հանեցին իսկույն
 գլխարկներ խարե,
 թիթեռ բռնելու
 արշավ սարքեցին:





Յեվ վաղվզեցին
ու թռչկոտեցին
թիթեռների պես:
Շունչերը պահած,
անաղմուկ քայլով,
ծաղիկից - ծաղիկ
թիթեռի հետքով՝
խորե գլխարկը
մի թակարդ դարձրած՝
բռնեցին նրանք
տասերեք թիթեռ:

— Վաղենք հիմա տուն,
ճարենք գնդասեղ,
ու մի փոքրիկ տուփ
վրան ապակի:
Մեր ես խլելան
թիթեռնիկներին,
մրցուլթյան կարգով
կողք-կողքի շարենք:
Իսկ վաղ առավոտ,

մանկապարտեզում,
տանէնք, նվեր տանք
ընկեր Վարդուհուն:

Իսկ ես սևուլիկ,
արծաթ գոտիով
փափլիկ փորիկը՝
կտանք Լեկոյին:
ասաց Օովանը:

— Լեկո՛, ա՛յ Լեկո՛...
— Լեկո՛, հէ՛յ, Լեկո՛...

Աջ ու ձախ ընկան
Լեկոյին գտնեն:

— Լեկո՛, ա՛յ Լեկո՛...
— Լեկո՛, հէ՛յ, Լեկո՛...

Լեկոն կորել է
ու ձեն ել չկա:


3.

Իսկ հինգ տարեկան
մեր մեծ Լեիկը
գեմբը լուրջ արած՝
ասաց ինքն իրեն.
— Յես հո աղջիկ չեմ,
փոր թիթեռ բռնեմ.
այգի յեմ յեկել,
պտուղ պիտ ուտեմ:
Տանձն ու խնձորը
ափսոս, շատ բարձր են,
ձեռքս չի հասնի,
փոր ինքս պոկեմ:
Իսկ են անպիտան
Բուրանն ու Սիրանն
առավոտ կանուխ
այգի յեն յեկել,
ընկած պտուղներն
հավաքել, տարել,
ինձ բան չեն թողել:

Ու քիչ եր մնում
 Լեկոն լաց լիներ:
 Բայց աչքին ընկան
 խաղողի թփեր:

Ել ի՞նչ ցավ քաշել.
 յերկու վոտք ուներ,
 յերկուսն ել ճարեց,
 ու շիտակ դեպի
 թփերը վազեց:

— Պահ, պահ, պահ, պահ, պահ...
 Ես ի՞նչ եմ տեսնում,
 եսքան ել խաղող,
 լիք վողկույզները
 ճյուղերից կախված,
 եսքան ել ճերմակ
 ու դեղին խաղող:
 Պահ, պահ, պահ, պահ, պահ...
 Ինչքան են կախվել:
 Այ դու իմ մայրիկ,





կատակ ես անում,
թե մեզ ես խաբում՝
բերում ես ճաշին
մի ափսե խաղող, —
«հազիվ ճարեցի
մի քանի փողկուղ,
մնացածը դեռ
խակ ե» — ասում ես:


Հա, հա, հա, հա, հա...
Ճուտիկն ու Ծովանն
թող թիթեռ բռնեն,
քրտնաթոր լինեն. —
խսկ յես, յես հիմա
շատ խաղող կուտեմ,
ընթրիքին գնամ
ու վոշինչ չուտեմ,
վոր ել ինձ չասեն՝
«բկլիկ ե լկկոն»...

Եսպես, ինքն-իրեն
խոսում եր լկկոն,

կարծես տիկ լինի...
 ու յերկու ձեռքով,
 շատ արագ - արագ,
 խաղող եր քաղում,
 բերանը լցնում:

Բերանը հոգնեց.
 խաղողը թթու
 ատամներն առին: —
 Ձե՛, քաջ եր ինչո՛ն:
 Ինչպե՞ս կլինի
 խաղողն առաջին,
 վոր ինքը չուտի...

...Ու շարունակեց
 ուտել, հա՛ ուտել,
 մինչև վոր հոգնեց
 ու ընկավ կողքի:
 Բայց չարածնին
 դեռ չըղաղարեց.
 փորը, խո՛մ փո՛ր չի,





1008 3964
35069

Հիմի ել պառկած,
փաքերով, ձեռքով
ճյուղերն ե քաշում
մոտեցնում բերնին,
կրծով, հա, կրծով,
ու մի մասն ել դեռ
գետինն ե թափում:

Լեկոն քրանել եր,
Լեկոն տանջվել եր
շատ «աշխատելուց»,
շատ ել հոգնել եր —
խաղողը բերնում
խոնր, մրափում եր:

4.

— Լեկո՛, ա՛յ Լեկո՛...
— Լեկո՛, հե՛յ, Լեկո՛...
Շատ, շատ կանչեցին,



շատ թափառեցին,
շատ ել վախեցան.
մոլոր մնացին
Ճուտիկն ու Ծովանն:

— Ես հւր ե կորել,
ուր ե գնացել
փոքրիկ բկիկը, —
ասում ե Ճուտիկն:
— Բա, մենք Լեկոյի
Յեվա մայրիկին,
Վաղո հայրիկին
ի՞նչ պատասխան տանք, —
լալիս ե Ծովանն:

— Լեկո, ա՛յ Լեկո...
— Լեկո, հե՛յ, Լեկո...

— Ա՛...
Լսվում ե մի ձայն
թփերի տակից:

— Ի՞նչ ձայն ե Ճուտիկ,
— հւմ ձայնն ե, Ծովանն:
գնանք մի տեսնենք
խոմ մեր Լեկոն չի՞:

— Մա՛... մա՛...
լսվում ե լացը
փոքրիկ մանուկի:

Ել կասկած չկա,
Լեկոն ե այնտեղ:
Վազեվազ հասան
Ճուտիկն ու Ծովանն,
յերկար փնտռեցին,
ու վերջը գտան
թփերի տակին:

— Վա՛յ, Լե՛կո ջան,
վա՛յ, ընկե՛ր ջան:
Յերեսդ կեղտոտ,
բրտնակալած.

աչքերդ ուռած,
լացակումած.
շունչդ հեվի հեվ,
փորդ ել ուռած...
Վա՛յ, Լեկո ջան,
ի՞նչ պատահեց.
ո՞ճը կծեց:

— Ը՛հ, Ը՛հ, փա՛յ, փա՛յ,—
ծանր տնքում եր
մեր «հերոս» Լեկոն,
ուր ընկերների
թեվերին ընկած՝
պատմում եր դանդաղ
գլխից անցածը,
և վերջն ել ասում,
փոր փորս ե ցավում,
աքերս վառվում,
ծառ ու թփերն են
շուրջս պտտվում:





5

— Ի՞նչ անենք, ճուտիկ
— Ի՞նչ անենք, Ծովան:
Յեկ նրան տանենք
մանկապարտեզը,
բժշկին կանչենք,
ու նրան խնդրենք
ես ուռած փորը
ասեղով ծակի,
թթու խաղողը
փորիցը հանի,
ու մեր լևկոյին
շուտ լավացնի:

— Չէ, չէ, չեմ ուզում, —
կանչում է լևկոն.
բժիշկը յերեկ
ասեղն առած
իմ թևը ծակեց,
կաս - կարմիր արեց.
չե՛մ ուզում նրան:

Խնդաց Ճուտիկը,
խնդաց Ծովանը,
ու միաբերան
ասին Լեկոյին.
— Ճիշտ ե, թե՛ն ուռեց,
բայց թե բժիշկը
ինձ, բեզ, ազատեց
հիվանդությունից:

Ճուտիկն ու Ծովանն
սրամիտ եյին, —
մանկապարտեզում
շատ բան սովորած:
Ձեռք ու վոտք ընկան,
թե մի ճար անեն՝
նրան տուն տանեն:

Գտան յերկու ձող.
ձողին կապեցին


մի բանի ճյուղեր,
վրան ել լցրին
կանաչ առվույտ խոտ,
յեղավ պատգարակ —
պառկելու համար
փափուկ ու հարմար:

Ծովանը բռնեց
Լեկոյի վոտքից,
Ճուտիկը բռնեց
նրա ուսերից,
ու մեջքի վրա
Լեկոյին դրին
պատգարակի մեջ,
կողքին ել զգուշ,
խսրե գլխարկով
թիթեռնիկներին:

— Յես սանիտար եմ, —
ասաց Ծովանը.
— յես ել բուժակ եմ, —

ասաց ծուտիկը:
 Ես մեր բլլիկին
 տանենք մայրիկին,
 յեթե պետք լինի
 բժիշկ կկանչի,
 Լևկոն բժշկվի:

Մեկ, յերկու,
 մեկ, յերկու...
 — Կամաց բայենք,
 — հանգարտ տանենք,
 փորը Լևկոյի
 ուռած տիկ է՝
 կպատռի:
 Մեկ, յերկու,
 Մեկ, յերկու...
 Ամեն կողմից
 հավաքվեցին
 մանուկ ու պառավ,
 ծերունի, ջահել...
 — Ի՞նչ է պատահել,



— ծառից են ընկել:
— Խոմ մարդ չի մեռել:
— Ես պատգարակը
վճրտեղ են ճարել:

— Վա՛յ, վա՛յ, բալա՛ ջան,
որս խավարեր,
ես ի՞նչ ե՛ յեղել,
եղ ո՞վ ե՛ յեկել
քեզ աչքով տվել: —
Վախեցած կանչում ե
յերեք վոտանի
Յուզաբեր տատր,
գլխին ե տալիս
ուռ արցունք թափում:
Մյուս կողմիցն ել
շտապ բայլերով,
դեմքը վախեցած,
դեղնագույն դարձած,
գալիս ե Յեվան —
Լևկոյի մաման:

Լեկոն, վոր մինչ այդ
հանգստացել եր,
կրկին հեկեկաց.
— Մամա, մամա ջան,
գրկիր ինձ, տար տուն...

Տատիկի լացին
Լեկոն միացավ.
Նրանց արցունքից՝
մեր ընկերների
սիրտն ել թուլացավ:
Մինչև այդ բուպեն
ճուտիկն ու ծովանը,
վոր շատ քաջ էյին,
եւ չդիմացան:
Սերգոն, Ադամը,
Սեդան, Նոյեմը
հաստատ չիմացան,
թե ինչ ե յեղել,
մոլորված, շփոթ,
ձեն - ձենի տվին:

1

Յերկար չիբուխը բերնին,
կոլոր մահակը ձեռքին,
ինքն եւ յերկար, բարդու պես,
վոլորելով բեխերը՝
այծերի պողերի պես,
հաստատ քայլով մոտեցավ
Հեթում պապին - այգեպան,
ծա՛նր - ծանր. հարցրեց.
— Ի՞նչ խաբար ե, յերեխե՛ք,
հավաքվել եք դուք այստեղ
և լաց ու կոծ եք սարքել:

— Ձեմ իմանում, պապի ջան,—
ասում ե լալով Սեդան.
են Լեկոյին տեսնում ես,
ձեռքն ե կոտրել, յերևի,
վոտքից արյուն կհոսի:

— Լսել ես, թե աչքովդ տեսար:

— Ձե՛, եղպես ասաց ինձ Սերգոն,
նրան ել ասել ե Մարոն:

— Հա՛...

Ապա մի ճամբա բացեր
գնամ հիվանդին տեսնեմ,
գուցե յես մի ճար անեմ:

Վարպետը շոշափեց ձեռքերը,
յետ-առաջ շարժեց վոտները,
փնտռեց՝ այնտեղ արյուն չգտավ,
միայն տուգած փորը նա տեսավ:

— Հը, այ բկիկ Լեկո,
ի՞նչ ես կերել այդքան շատ,
այգում ել բան թողել ես:

— Հեթում պապի, լսիր մեզ,—
նրան մենք պառկած գտանք
խաղողի թփերի տակ.
մեր շինած պատգարակում
պառկացրինք ու յեկանք:

— Հա՛... ուրեմն այդպես...
խակ խաղող ես դու կերել,
և ո՞վ գիտե, թփումն ել
ինչքան խաղող փչացրել:
Դու մի չես ել մտածել,
վոր խաղողը խակ ե դեռ.
ու խակ խաղող ուտելով՝
փորացավ ես ունեցել:
Կտրատելով վողկույզ, թուփ,
մեր այգուն ես վնասել,

Եսքան մարդու առաջն ել
ամոթով ես մնացել:

Լեկը հուզվեց, ունքերը կիտեց,
արցունքոտ աչքերը գետինը հառեց,
պատգարակի մեջ խորտեղ նա փնտռեց,
ընկերներին ել յերես շուռ տվեց:

Պապիկը տեսավ, նրան հասկացավ,
ժպիտն յերեսին, Լեկոյին ասաց. —
— Հա, դե լավ, լավ, մի հուզվի,
լացն իսկի բանի պետք չի.
Բայց ես փորձը լավ հիշի...

Դեհ յերեսայք, ճամբա տվեք,
բժշկուհուն դիմավորեք...

Բժշկուհուն վոր տեսան,
յերեսերը վեր թռան,
իսկույն շրջապատեցին
իրենց ընկեր Լեկոյին:

Բժշկուհին ժպտերես
մոտենում է Լեկոյին՝
քնքշությամբ, ուշադիր
քննում նրան և լսում
Լեկոյի մասին պատմածը:

— Վեր կաց, դու, չարածճի,
քեզ կուղեկցեն դեպի տուն:
Թախտի վրա կպառկես,
կտամ քեզ լուծողական,
վոր ստամոքսդ փքված
մաքրվի խակ խաղողից:
մայրիկդ կխնամի
շուտով դու կառողջանաս,
այ դու փոքրիկ չարածճի:


Պատգարակիցը Լեկոն
նազով-տուգով դուրս յեկավ, —
շորոր-մորոր բայլերով,
դեպի տուն ճամբա ընկավ:

Յերեխերը հանգստացան,
իրենց լացն ել մոռացան,
ու զրնգան ծիծաղով
պապիկի մոտն յեկան:

— Պապի՛, պատմի պատմութիւն,
ասաց մեր փոքրիկ կորյունը:
Մենք շատ խելոք կնատենք,
ականջ կանենք, կլսենք:

Մեր պապիկն ել դարձավ թե՛
— եսոր ել ի՞նչ պատմութիւն.
Մեր Լևկոյի դեպքն եսոր
ձեզ լավ խրատ թող լինի,
փոր խակ պտուղ դուր չուտեք:

Աշխարհումը մարդ չկա —
պտուղ ուտել չուզենա,
բայց թե ուտելու համար





այգին պետք է խնամել:
Այգու հողը լավ փորել,
չորցած ծառերը կտրել,
ջրել այգու ծառ ու թուփ,
նրանց վորդերից մաքրել:
Այս մեր այգուն ընդարձակ
աչքի լուսի պես սիրել:
Քսակ պտուղ յերբեք չուտել,
այլ սպասել վոր հասնի,
հազար-հազար կողովով
հավաքել տանձ, դեղձ, սալոր,
խաղող, խնձոր, սերկևիլ,
ու ել տասնյակ տեսակի
համով - հոտով պտուղներ:
Իսկ դուք գիտե՞ք ում համար:
Եղ բոլորը ձեզ համար,
ձեր վաղվա որվա համար:
Հիմա վազեք, գնացեք,
այ, են կողովը բերեք,
ձեր ու իմ բաժին պտուղն
անուշ արեք ու կերեք:

Սիրերդ ուր ձեր այգին այս,
 նրան ուր լավ պահպաներ,
 ու նրա ծիլերի հետ՝
 ծլեր, ծաղկեր ու աճեր:



Ответ. редактор Г. ПОТЕНЦ

Тех. редактор О. Тер-Давыдов

Рисунки худ. Л. Д. Подламова

Издание 466-4044 О-ем 1,25 п. л. Статформат Б6 125x176 Уполнранный
 Б-386 Тираж 1200 Заказ 4492 Сдано в производство 29-VIII Подписано
 к печати 3-XII 34 г.

Типография им. Стачки 1902 г. АЧПК в Ростове на-Дону



ՀՀ Ազգային գրադարան



NL0408359

4918-

13529

ԳԻՆԸ 1 ռՈՒԲ.
Цена 1 руб.

М. ПИРУМАН

НЕСПЕЛЫЙ ВИНОГРАД

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ ИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳԱՀԱՅՈՐ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)